ընդարձակագոյն Յովսեպոս Եբրայեցի՝ 'ի Գիրս յաղագս պատերազմացն Հրէից ։

Խաժամուժ ամբոխն եբրայական առաւել մտադիւր անսայր ստութեանց խաբեբայից և առաջակացն այնոցիկ , որք զխաղաղութիւն ասէին քան աՀաւոր նշանաց եւ արՀաւրաց երեւելոց , որ զաւերումն Երուսաղէմի եւ զառտակումն ժողովրդոց գուշակէին ։

Նախ երեւեցաւ յերկինս աստղ մի 'ի ձեւ նիզակի եւ եկաց 'ի վերայ Երուսաղէմի ամ մի ողջոյն ։ Եւ 'ի տօնի բաղարջակերացն յիններորդ ժամու գիշերոյն Հատան փայլատակունք 'ի վերայ սեղանոյն և Տաճարին , ուր խռնեալ էին ժողովուրդք բազումք , և եղեւ լուսաւորութիւն իբրեւ կէս ժամ ։ Դարձեալ 'ի նոյն տօնի երինջ մի , զոր ածեալ էին 'ի զոՀ , երկնեաց եւ ծնաւ գառն 'ի Տաճարին ։ Արեւելեան ներքին դուռն Տաճարին պղնձաձոյլ եւ յոյժ ծանր 'ի մէջ գիշերի ինքնին բացաւ , զոր լուեալ իշխանաց Տաճարին 'ի պաՀապանաց , եկեալ փակեցին ։ Եւ զկնի տօնին նախ քան զմտանել արեգական՝ երեւեցան յերկինս 'ի վերայ ամենայն գաւառին կառք և զօրք սպառազինեալք , որք յանկարծ պատեցին զքաղաքն ։ Եւ 'ի Պենտեկոստական տօնին մինչ քաՀանայքն 'ի գիշերի կային 'ի սպաս պաշտաման Տաճարին , լսելի լինէր շարժումն և Հնչումն , և ապա ձայն բարբառոյ , գնամք աստի , գնամք ։ Յեսու ոմն անուն երեւեցաւ 'ի տաճարին 'ի տօնի ՏաղաւարաՀարաց , աղաղակէր և ասէր ․ Ձայն յարեւելից , ձայն յարեւմտից , ձայն 'ի չորից Հողմոց , ձայն 'ի վերայ Երուսաղէմի և Տաճարիս , ձայն 'ի վերայ փեսայից և Հարսանց , ձայն 'ի վերայ ամենայն ժողովրդեանս այսորիկ ։ Թէպէտ կալան զնա խոշտանգեցին եւ տանջեցին , բայց նա ոչ լռէր և ոչ դադարէր 'ի բանիցն ։ Եւ 'ի քերել զմարմինս նորա մինչեւ յոսկերս , նա ոգւոց Հանեալ ասէր ․ վա՜յ վա՜յ Երուսաղէմ , եւ իբրեւ եՀարց զնա դատաւորն Ալբինոս , թէ ո՛վ , կամ ո՛ւստի է , և վասն է՞ր զայն բարբառի ․ նա ոչ ինչ տուեալ պատասխանի կոծէր զքաղաքն զցայգ եւ զցերեկ մինչեւ յամս 7 և ամիսս 5 ։ Եւ 'ի պաշարման անդ քաղաքին , մինչ շրջէր 'ի վերայ պարսպին եւ ասէր ․ վա՜յ վա՜յ քաղաքին եւ Տաճարին , եւ իբրեւ վերջին յաւել վա՜յ ինձ , ձգեալ քար